

Շամիրամի քաղաքէն իր դիտողութիւնները, սրամիտ ու հայեցի անեկտաւները, այն օրերու ուսանող սերունդէն սեւեռումներ, մեծ չափով բիրտ, յամառ, բայց կորովի մտայնութեամբ, որ աշխարհի ամէն անկիւնէն վանեցիները կ'ընէ իրարու նման, այլամերժ ու պինդ: Այս ամէնը՝ տրուած գոյնով ու կարկառով, գուցէ անոր համար, վասնզի Վասպուրական աշխարհը մօտ է Արատեան հովիտին, ու այդ օրերուն՝ յեղափոխական գաղափարագրութիւնը իր ամէնէն շատ նուաճումը կատարած էր սահմանամերձ այդ գաւառէն: Անոր բերնին մէջ քաղաքը, Խորենացու կողմէ այնքան պերճ նկարագրուած՝ Մաթիկ կը տարբերէր մեզմէ մեր պատմութեան ու հայրենիքին վրայ ընդարձակ ծանօթութեամբը՝ պտղաւէտ, նկարէն, իր մարդերուն տարօրէն չարքաշ ու կծծի պարկեշտութեամբը. քաղաքը՝ կէս մը տաճկըցած բազմաթիւ մինարէներէ, զօրանոցներէ ու մա'նաւանդ՝ Բերդէն, ուրկէ կը թափէր այդ խզտող թրքութիւնը, դրօշակով ու թնդանօթով: Իր հաստ, այլամերժ հոգեխառնութեամբ, որ դարաւոր յեղումները կը խրտացնէր լիճը շրջանակող խստաբարոյ գազաթներուն, չեչոտ, անհրապոյր, ինչպէս էր դէմքը այդ ծաղկահար երիտասարդութեան: Քիչիկ մը յիշեցնող՝ դիմագիծը հրաշքով մեր կողմերը ինկած վարպետներուն, հաստ, փայլատ, դաժան: Որոնք ջարդերէն առաջ կը փնտռուէին իրենց տարօրէն կենդանի պարերուն, մութ ու խոնաւ երգերուն ու տրտում աչքերուն համար: Խիստ, հաստ այդ մարդերը, նոյնը՝ Մաթիկին ալ պատմումէն, որոնք իրենց նկարագիրը հարկադրած էին հայ յեղափոխութեան, զայն մասնաւորելով, իրենց միայն սեփական կազմակերպութեան մը վերածելով: Ու կ'արհամարհէին «թանձր շրթներով» ինչ որ իբր հրահանգ ու իմաստութիւն կու գար Կովկասէն: Ինքնավստահ այս հաստումը իր լրումին էր հասած Մաթիկի օրերուն: Հոն ճանցաւ մեր տրիբունը իմացական իր առաջին պարտութիւնը, ամէնէն ամրացուած, զրահուած իր կոչէն: Ընկերաբա-